ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 412-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23.11.2021Թ. 347-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 10-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 09.08.2007թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 1032-Ն որոշումով և հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի ղեկավարի 23.11.2021թ. «Սեփական տնամերձ հողամասում գտնվող բնակելի տան ինքնակամ վերակառուցումը որպես հյուրանոց և ինքնակամ կառուցված կաթսայատունն ու պարիսպն օրինականացնելու, շինության գործառնական նշանակությունը փոփոխելու, Ալավերդի համայնքի ղեկավարի 22.10.2021թ. N 326-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման մեջ կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ.

   1.1 Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 8 բնակելի տուն հասցեում գտնվող, 06-002-0108-0013 ծածկագրով, 0.04782 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման նշանակության:

2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 29
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 413-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11. 09. 2020Թ. N 289-Ա, 23.06.2021Թ. N 202-Ա, 21.07.2021Թ. N 248-Ա, 28.10.2021Թ. N 331-ԱՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 11.09.2020թ. «Համայնքային սեփականություն ճանաչված, օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 289-Ա, 23.06.2021թ. «Գյուղատնտեսական նշանակության հողամասը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 202-Ա, 21.07.2021թ. «Գույքը վերաբաժանելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» N 248-Ա, 28.10.2021թ. «Սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբաժանմանը համաձայնություն տալու, վերաբաժանելու և փոստային հասցե տրամադրելու մասին» N 331-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 29
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 414-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13- րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Սամվել Սուրենի Բագրատյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 10082018-06-0021 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2/2 հասցեում գտնվող Սամվել Սուրենի Բագրատյանին (ծնված՝ 06.07.1963թ.), սեփականության իրավունքով պատկանող, 0.0812 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 2018թ. ինքնակամ կառուցված, 160.63 քմ արտաքին մակերեսով (128.4 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը:
2. Օրինականացված բնակելի տան համար սահմանված՝ 84234 (ութսունչորս հազար երկու հարյուր երեսունչորս) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 29
ք. Ալավերդի